

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻՐԻ ԷԱԺԱՐ	
Վճարում	Փր. 1.50
Վճարումը գույք	2
Արտատվում	2.50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չէն զրկուիլ :
Համակ դրամ՝ եւոյն զրկել հե-
տեւեալ հասցէին ,
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ « ԿԱՏԱԿ » Ի
Վճարում (Պաշտօնաւ) :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието

„ГАДАГЪ“

ВАРНА (Възария).

Administration du journal

« GADAG »

VARNA, (Bulgarie).

Հատը 7 1/2 Սանթիմ

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Դիւրին , շատ դիւրին կարծեցին :

Մեր դպրոցի երախաները , յեղափո-
խութեան արիւնտու դաշար՝ Բարեգի
Շան զիշիգի կամ Լօնտանի Հայ Բարի
հանրապարտեղներու ծառին ու ծաղիկին
տակ հեշտանքի ու հաճոյքներու գըղ-
ուանքներն կարծեցին , լուրիս խաչէլն
աւելի դիւրին մի արհեստ կարծեցին ,
կարծեցին , կը կարծեն և տակաւին պի-
տի կարծեն :

Ձին ու ճարտի միներուն հաշիւը
ծշողութեամբ հաշուող մեր մըրքորները
և Բարեգի գաղատուն շնիկներուն թիւը
Ա. Բ. Գ. պէտ գիտցող մեր միւսիւնները
ինչո՞ւ դիւրին չը կարծէին նաեւ Հայկա-
կան ազատութեան փոքրիկ , շատ փոք-
րիկ մի հաշիւը :

Ի՞նչ հեռուները երթանք և անիրա-
ւութեամբ քննադատենք մեր ճիտան
յեղափոխականներու արարքներն , չէ՞ որ
երեք հայ , երեք հաս բերդեր դրաւե-
ցին , երեք գաւառի տիրեցին ու թուրք
բանակը լիզապատառ ծածկէ ծակ փա-
խուցին :

Կարող , Պաշտօնաւ ու կարինը առ-
նունքը երեք հաս Հայեր էին , տսիկա

աշխարհ լսեց ու տմեն մարդ գիտէ —
Լօբիս Մեղիքոֆ , Տ. Ղուկասօֆ ու Հա-
զարէֆ . միեւնոյն դիւցադը՝ երեքներու
երկրի տանձը կըծողներու երեք ուրիշ
զաւակները՝ միթէ կարող չէին միեւնոյն
գերը կատարելու . Նաղար պէկ և Իր
աջ ու ձախ թիկնապահ՝ Նշան կարա-
պետեան և Շմաւոն՝ ինչո՞ւ չը կարծէին
որ դիւրին , շատ դիւրին է Հայաստանը
ազատել ու անոր տիրապետել :

Թրագիրը փայլուն էր , պէտք էր վար-
պետ կերպով շահագործել . Իսապիայի
տանձը Եթովպիա արժէք աւելի , Սնդ-
լիոյ տպածոյներն ալ Տոմկոտումն կրնայ
հագնիլ . երեքներու ծրագիրն ալ գտաւ
իր տպուշ յաճախորդներն ու գիւհաբը
գնորդները Հայ ժողովուրդը , և ահա
կ'սկսի Հնչակեան տօնապահաւը , ճիշդ
տասը տարի տակարանի կշիւը Հնչակի
լեզուակին յանձնած հնչեց ու հնչեցող
թղթէ ուսմանով ու մեքանէ գնդակնե-
րով . Սասունը դրաւուեցաւ , Արաբկիրը
ազատութիւն առաւ , Ռ. Բ. Փա , Սկն , Մար-
տաւան , Բինկեան , Կեսարիա , Սեբաս-
տիա , Սուէտիան ու Չէք Մէրզիվան ալ
երջանիկ են այսօր և եռապետ Նաղար
պէկն ալ երկու ձեռքերը կուրծքին վրայ
դնելով կը պարծի վախճա՞ւ պիւններով

ու ժողոված գեղին ոսկիներով կամ թըղ-
թաղրամներով :

Հնչակեան երեքներու դառած յաջո-
ղութիւնն ու ստացած փայլն ու փառքը
չէր կրնար ուրիշ երեքներու նախանձն
չը շարժել և ակորժակները չը բանալ-
զիցն ու զորքնաւ ծրարելու համար
կտաւի կտոր մը պէտք էր և այդ
կտաւին անունն ալ եղաւ Դրօշակ իր
պանծալի երեքներով — Արմէն Գառ-
պար , Առվախի և Հրաչեսոյ . միշտ երեք ,
միշտ երեք : Երբորդու թիւնը կազմուած
էր , միեւնոյն հաւկիթներն սակայն տար-
բեր դոյնով ներկուած , Տրապիզոն , Վան
և Օթօման բերդերն ալ դրաւուեցան և
այսօր բոլոր Հայաստանը ունինք մեր
տրամադրութեան տակ :

50,000 ուրբ , 160,000 դիւակ եւ
2,500,000 թշուառ ու դժբաղդ հայ ժա-
ղովուրդ մը :

Լօրիս Մէլիքօֆի , Տ. Դուկասօֆի և
Լազարէֆի , այդ երեք հայ անուան հեռ-
պէտք չէր նսեւ մոսնալ մեծն Ռուսիոյ
միջիւնի չափ շատ սօցսաները , թնդա-
նօթներն ու պէրսանքները մանաւանդ
Լմբէռիալ ոսկիները որ անձրեւէն շատ
կը անգար ամեն տեղ , ամեն մարդու ա-
ռաջ :

Հայ ժողովուրդ , դու այս տողերը
կարդալով մի յուսահատիր . զեղծում
ները ձաղկելով , պակասութիւնները հար-
ուածելով մեր նպատակը չէ քեզ յու-
սահատեցնել , այլ յիշեցնելով քեզ
քու աչքի սուշեւ կտաարուածներն ,
կ'ուզեմ զքեզ զգուշացնել որ այլ եւս ա-
ռանց դործիք դառնալու այս կարգի
սօնփիշոս և միայն իրենց մանածը ներ-
կել ուղղդ երեքներու , ոտք ելնես , աչքդ
բանաս , դու քու մէջդ միանաս և այդ
միութեան արդիւնքը եզով արդարեւ

վստահելի ու պատկառելի ներկայացու-
ցիչ մարմնով մը փարիս յեղափոխական
Ս. Կործին , զի երախաներուն կարծա-
ծին չափ զիւրին չէ Հայկական խնդիրը :
Ըսած ենք ու պիտի ըսենք տակաւին թէ
ի՞նչ պէտք է ընել , համբերէ և պիտի
սեանես :

Յ. ՉԱՔՐԵԱՆ

Պուրկաղ 21 յուլիս , 97 .

Յարգելի Խմբագիր ,

Եւ խնդրենք սիւնակ մը շնորհել մեր
ներկայ հանրադրութեան Ձեր ժամառ-
նակի պահանջն եղող թերթին մէջ :

Երբնք տեղացի և թէ պանդուխտ հա-
յերս , դառն փորձերով համոզուած լի-
նելով որ յեղափոխական կուսակցութիւնն
երկուքի բաժնուած լինելով , մեր ձեռ-
քով մեր տան քանդման , կոթմանման և
մեր դրամով մեր եղբայրներուն սպան-
ման պատճառ կը դառնանք և տեղի
կուտանք յորատեւ կռիւներու , սաս-
տիկ վէճերու և նոյն իսկ եղբայրասպա-
նութեան :

Եւ այս բաժանեալ ուժերու պատճառ
տալարդ լին կը մնան մեր աշխատութիւն-
ներ և կը փճանան մեր արիւն քրտինքով
հաւաքուած դրամներ :

Պաշտօնապէս կը յայտարարենք որ
թուականէս սկսեալ մենք և ոչ մէկ կու-
սակցութեան չենք պատկանիր :

Ի դուր մեր կէս անօթի մնալով տուած
լուծմաներէն ծախսելով ո՛ր և է կուսակցու-
թեան պատկանող ներկայացուցիչ կամ
դրամահաւոր չը կոչ տեղս , զի այլ եւս
հինգ փարոյ չպիտի տանք , մինչեւ որ
յեղափոխութիւնը ունենայ իր միութեան
դրօշը , յանձնուած պարկեշտ և ուղղու-
միտ անձերու :

Եւ որպէսզի այդ բաղձալի Միութիւնք

ոչ միայն իրադրություն, այլ և դրուի հաստատ հոգեբույժական, մենք յանուն հարկւր հաղարաւոր նահատակներու և յիսուն հազար որբերու, կոչում կ'ընենք առ Բարձրապատիւ Նուպար Բաշա որ, տասներկուքի չափ բացարձակապէս չէ՝ զոր, պարկեշտ և ձեռնհաս անձեր բուրքերով իր շուրժը, լրացրաւ և կամ իր յարմար դատած եղանակաւ, հրաւէր կարգայ կուսակցութեան վարիչներուն, ներկայանալ այդ աղգընտիր ժողովին, որպէսզի ատունք տան նախապէս բացատրութիւններ անցեալին վրայ՝ և կամ յայտնութիւններ հնար եղածին չափ և հոն ոտուք՝ իրաւէն, գողը՝ պարկեշտէն զատուելով, կազմուի Միութիւնը որոշ ծրագրով:

Ահա այդ Միութիւնը պիտի լինի մեր փափաքներուն իրականացումը, որուն պատրաստ ենք սալ ոչ միայն մեր դրամը, այլ մեր կեանքն իսկ:

Անոնք որ չեն գար կամ խոյս կուտան ալ և այլ առարկութիւններով, այդպիսիներ բացարձակապէս սեւ հոգի, ցածեր են, որոնք կուզեն շարունակ մութին մէջ մնալ: Բաւ է սակայն պարսաւել զանոնք թերթերու մէջ. ժողովրդական ընդհանուր զգուանքը ինքնին կը գնէ աղտնց յեղափոխական կեանքի վերջակէտը:

Ո՛վ կուսակցութիւններ, եթէ դուք ալ անկեղծ էք և փափաքող ազգի փրկութեան, ժողովուրդի երջանկութեան և եթէ խիզճ ունիք, դուք եւս հրապարակաւ կոչում ըրէք Նորին Վսեմութեան յայտարարելով թէ՝ պատրաստ էք ինքզինքնիդ ենթարկել իր կազմելի ժողովին քննութեանը. Ձեր այս հրապարակային յայտարարութիւն մինչեւ մէկ աստիճան Ձեր անկեղծութեան ազայցոյցը իսկ Ձեր բութութիւնը, Ձեր դատապարտութիւնը պիտի լինի:

Ուրեմն առ Ձեզ Բաշա, առ Ձեզ կ'ուզենք մեր ուղերձներ, աղաւթաւ այս բազմաչարչար ժողովուրդը, զոր դիտենք թէ կը սիրէք:

Տիրոջ կացութիւնը և կուսակցութիւններու այս բաժան և անպատասխանատու ընթացքը, ի կոսուսա կ'առաջնորդեն հայութեան մնացած բեկորները:

Ձեր բարիքները զլուս գործսցով մի պիտի նուիրագործէք, երբ հաճիք նշանակեալ պայմաններու տակ հիւսել Միութեան դրօշը և նուիրել հայ ժողովրդին, որ այսօր կը տառապի ուր որ ալ ըլլայ, թէ իր հայրենի երկրին մէջ և թէ օտար աստղերու տակ, չ'որհիւր կուսակցութեանց անհեռաւոր և եսասէր ընթացիցը:

Կեցցէ՛ Միութիւն


Կեցցէ՛ Յեղափոխութիւն

Կործանին կուսակցութիւններ:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Պերճ: Մարտիրոս: Մակար: Մաղաւտ Օհանեան: Ղազար Մխոյիսան: Մկրտիչ Մուրադեան: Պետրոս Խաչատուրեան: Յարութիւն Մուրադ: Յովհաննէս Դարուս: Սեդրաք Խաչիկ: Աղեքսանդր Մեսրոպ: Պողոս Մանուկեան: Թորոս Յովակիմեան: Իսրայէլ Պողոսեան: Դէորդ Թաթէոսեան: Մարտիրոս Դաւիթեան: Պաղտատար Դրիգորեան: Մանուկ Վարդանեան: Կարապետ Յովհաննէսեան: Պէպութով Յովհաննէսեան: Խաչիկ Յարութիւնեան: Թովմաս Պետրոսեան: Մըկրտիչ Սահակեան: Յարութիւն Պետրոսեան: Առաքել Յարութիւնեան: Թորոս Դրիգորեան: Մկրտիչ Դրիգորեան: Դրիգոր Յարութիւնեան: Յակոբ Չափանեան: Սիրական Մարտիրոսեան: Միսաք Թաթէոսեան: Պողոս Մուքրասեան: Սարգիս Յարութիւնեան: Յովհաննէս Կարապետեան: Պետրոս Վարդանեան:

Տեղւոյ անձկութեան պատճառաւ վերոյիշեալ քաղաքացիութիւններէն 203 անձանց անունները դուրս ձգելով միայն 35 անուններ յիշած ենք:



ԵՐԱՁ

Հնչակեանի եւ Դրօսակեանի տեսակցութեան մը վրայ, յ'Աղէսաւորիս:

Հնչ. — Բարեկամս, ինչո՞ւ չէք կամիր մեզի հետ միանալ. տեսէ՛ք՝ մենք ի սէր ազգութեան Միապետ Նաղարէկը վանեցինք որ ընդհանուր միութիւն մը ըլլայ:

Դրօշ. — Ա՛խ, եթէ գիտնայիր մեր նկատումներն, դուք եւս իրաւունք պիտայիր մեզի:

Հնչ. — Ի՞նչ են ձեր նկատումները, արդեօք չէ՞ կարելի ինձ բացատրել:

Դրօշ. — Հաւատացէ՛ք որ, Հնչակեանի գործիչներուն մէջ միայն ձեզ անկեղծ ճանչնարով կը համարձակիմ ըսել թէ՛ Ձեր վարիչներուն մերձեցներն լրաններ էին ժամանակաւ, որոնք արդեւ կը հանդիսանան մեր միանալուն:

Հնչ. — (Ծաղրանօք) հա՛. . . հա՛. . . հա՛. . . կամ ձեր ակննդները խաղած են եւ կամ մեր ձայները մարած որ զիրար չենք կրնար հասկնալ. միթէ չըսեցիք ումիաներ առաջ որ Եղիսպատի աւանտիկներն կը պռնայինք թէ՛ Միութեան համար Գաշակեցականներուն ակնարկած անհասանելի պիտի հեռացնէք երբոր պաշտօնապէս բաւարարեն:

Դրօշ. — Դա՛ն ուրախ եմ այդ մասին. բայց ազակեցորոնացումին ի՞նչ պիտի ըսէք. այժմ մենք կեդրոնացումը երբէք չենք կրնար ընդունիլ, որովհետեւ չառ ու շատ տուժեցինք:

Հնչ. — Օ՛, այդ հարցին ո՛չ դուք արտօնեալէք վճռապէս պատասխանելու եւ ո՛չ ալ ես. միմիայն երկու կողմէն նը շանակուած վաղորները կարող են որոշել թէ՛ ո՞րը պէտք է ընդունիլ: Ինչպէս որ ժողովուրդն ալ այս համաձայնութիւն նախապաշար Միութիւն կը պահանջէր քան իր պատկառութիւն կը պահանջէր:

Դրօշ. — Անպատճառ ժողովուրդներ այս անակտրոփ պահանջին զիջաներէ՞ն է:

Հնչ. — Անշուշտ, որովհետեւ արդար է:

Դրօշ. — (Ձեռքը ճակտին տանելով՝ կը մռմռայ, ա՛խ, այս անիծեալը Պ. Ճիհանկիւլեանի պէս միտիւր կըլլի շեմաներէն չ'որ կ'ըսեմ, դրապէս կը հերքէ, սակայն վտահեմ որ՝ եթէ մեր թագուն նպատակները հասկնայ, մեզի համարապիտի դանուի. ուրեմն ուրիշ չըսելու եւ իր զգացումները ճշգրտեմք արտայայտելու համար երգ մնցնելով միջիւն պարզեմ): Բարեկամս, Ձեզ հարցում մ'ունիմ, բայց նախ երգ մնցէ՛ք որ Ձեզ պիտի վերապահէք եւ միտնալու Ձեր զգացումները ճշգրտեմք ինչպիսի արտայայտէք:

Հնչ. — Պատուիր վրայ կերպնում որ ուրիշ չպիտի իմանայ եւ զգացումներս ալ նոյնութեամբ պիտի արտայայտեմ ձեզ:

Դրօշ. — Դուք տալիս կուսակցութեան մէջ թէ՛ հայրենասէր մը եւ թէ Ձեր շահերը բարձր կը նկատէք թէ Ազգինը:

Հնչ. — (Խոր մտածումէ մը յետոյ) անկեղծութեամբ ըսելով կուսակցութեան մը զի եթէ հայրենասէր մ'ըլլայի. (Շարունակելի)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՆԵՑԱՒ

ՆՈՐ ՔՆՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՄ

ՀԱՒԱԲԱՆՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԷՆ 2 ՅԻՄՆԻՔ

—0—

Այն երգերունց որոն անհամար կ'ապաստէր ժամանակէ մ'ի վեր, ՉԻԵ ԷՋԵՐՈՒՔ, մեծ խնամքով սրբազան, բայց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաեւ բազմաթիւ նոր երգեր:

Փափաքողք պէտք է գիտն. առ. Մ. ԽԱՅԿԱԿԱՆ. Արեւելեան ապարան. Զրդ. Ուշտի թիւ 1104 ՎԱՅԿԱՆ. Վ. առաջին տարւոյ երկրորդէ պահանջուածներուն իւրաքանչիւրին վրայ պէտք է աւելցնել 20 ամբիւր իր բոլոր այլ ծախք:

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.